**ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ թիվ 4**

**30.05.2018թ. կնքված N ՏԿՆ-ԲՄԱՇՁԲ-2018/8Շ/3 կապալային աշխատանքների կատարման պետական գնման պայմանագրի**

**ք. Երևան** **«15» նոյեմբերի 2019թ.**

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունը, ի դեմս նախարարության գլխավոր քարտուղարին փոխարինող Հ. Բատիկյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Վառմաշ» ՍՊԸ և «Կուարլինի» ՍՊԸ կոնսորցիումը, ի դեմս «Վառմաշ» ՍՊԸ-ի տնօրեն Կ. Աֆոյանի, որը գործում է ընկերության կանոնադրության և կողմերի միջև 03.04.2018թ-ին կնքված Կոնսորցիումի պայմանագրի հիման վրա (այսուհետ՝ Կապալառու), մյուս կողմից, միասին այսուհետև՝ Կողմեր, ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ, հիմք ընդունելով Կողմերի միջև 30.05.2019թ. կնքված N ՏԿՆ-ԲՄԱՇՁԲ-2018/8Շ/3 պետական գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 8.5 կետը փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) հետևյալի մասին.

**1. Համաձայնագրի առարկան**

Կողմերը որոշեցին՝

1.1 ՏԿՆ-ԲՄԱՇՁԲ-2018/8Շ/3 ծածկագրով՝ «Մ-16, Մ-4 – Ոսկեպար – Նոյեմբերյան - Մ-6 առանձին հատվածների հիմանորոգման աշխատանքների» կատարման պետական գնման պայմանագրում կատարել պայմանագրի գնի նվազեցում 472 173 ( չորս հարյուր յոթանասուներկու հազար հարյուր յոթանասուներեք) ՀՀ դրամի չափով.

1.2 Պայմանագրի 5.1 կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«Սույն պայմանագրի ընդհանուր գինը կազմում է 1 297 927 827 (մեկ միլիարդ երկու հարյուր իննսունյոթ միլիոն ինն հարյուր քսանյոթ հազար ութ հարյուր քսանյոթ) ՀՀ դրամ, որից 216 321 305 (երկու հարյուր տասնվեց միլիոն երեք հարյուր քսանմեկ հազար երեք հարյուր հինգ) ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն:

Գինը ներառում է կապալառուի կողմից բոլոր ծախսերը:»

**2.Այլ պայմաններ**

2.1 Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Սույն Համաձայնագրում չնշված՝ Կողմերի Պայմանագրով նախատեսված իրավունքներն ու պարտականությունները թողնվում են անփոփոխ:

2.3 Սույն Համաձայնագիրը կնքվում է հայերեն լեզվով երկու օրինակից, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ:

**3.Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները:**

| ՊԱՏՎԻՐԱՏՈՒ | ԿԱՊԱԼԱՌՈՒ | |
|---|---|---|
| ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն | «Կուարլինի» ՍՊԸ | «Վառմաշ» ՍՊԸ |
| ՀՀ ք.Երևան, Կառավարական տուն 3, | ՀՀ Արմավիրի մարզ, ք. Էջմիածին Չարենցքարայի խճ.8 | ՀՀ Լոռու մարզ, ք. Վանաձոր Գործարանային 15 |
| ՀՀ կենտրոնական գանձապետարան | «Արդշինբանկ»ՓԲԸ «Էջմիածին» մ/ճ | «Կոնվերսբանկ»ՓԲԸ |
| ՀՎՀՀ 02815457 | ՀՎՀՀ 04704953 | ՀՎՀՀ 06912201 |
| ՀՀ 900011020253 | ՀՀ 2475900000293312 | ՀՀ 1930007407070100 |
| գլխավոր քարտուղարին փոխարինող | տնօրեն | տնօրեն |
| Հ. Բատիկյան | Ա.Պողոսյան | Կ. Աֆոյան |
| /ստորագրություն/ | /ստորագրություն/ | /ստորագրություն/ |
| Կ.Տ | Կ.Տ | Կ.Տ |